ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05, bhk@parliament

25 փետրվարի 2021թ.

25.02. 2021թ.

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի նախագահ
ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոն Միրզոյան,

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 103-րդ հոդվածի 3-րդ մասի, 120-րդ հոդվածի 3-րդ մասի, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 97-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 99-րդ հոդվածի 1-ին մասի, 106-րդ հոդվածի՝ Լուսավոր Հայաստան խմբակցության հետ համատեղ ներկայացնում ենք Ռազմական դրությունը վերացնելու մասին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշման նախագիծը:

Հիմնական զեկուցող՝ Արման Աբովյան:

Խնդրում ենք սահմանված կարգով շրջանառության մեջ դնել խորհրդարանի քննարկմանն առաջադրված սույն հարցը:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐՄԱՆ ԱԲՈՎՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05, bhk@parliament.am

25.02.2021թ.

ՈՐՈՇՈՒՄ N 38

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 120-րդ հոդվածի 3-րդ մասը, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 8-րդ հոդվածի 2-րդ մասը, 41-րդ հոդվածը՝

ՀՀ Ազգային Ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը

Ո Ր Ո Շ Ե Ց

հանդես գալ ՀՀ Ազգային ժողովի արտահերթ նիստ գումարելու նախաձեռնությամբ և ներկայացնել «Ռազմական դրությունը վերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշման նախագիծը:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐՄԱՆ ԱԲՈՎՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր

Մարուքյան Էդմոն Հրաչիկի	126	ԼՀԿ
Գորգիսյան Գեւորգ Սամվելի	125	ԼՀԿ
Ալեքսանյան Սարգիս Ռոբերտի	123	ԼՀԿ
Այվազյան Հրանտ Գնունու	131	ԼՀԿ
Անդրեասյան Էդվարդ Հրաչի	128	ԼՀԿ
Բաբայան Հարություն Վիլիկի	118	ԼՀԿ
Բաղդասարյան Գուրգեն Նիկոլի	124	ԼՀԿ
Գրիգորյան Սրբուհի Էդիկի	122	ԼՀԿ
Եղիազարյան Արմեն Էդիկի	119	ԼՀԿ
Խաչատրյան Արկադի Սանասարի	116	ԼՀԿ
Կոստանյան Աննա Մայիսի	120	ԼՀԿ
Մինասյան Սարիկ Սամվելի	132	ԼՀԿ
Սամսոնյան Անի Տաճատի	117	ԼՀԿ
Սիմոնյան Կարեն Մանվելի	121	ԼՀԿ
Սիմոնյան Տարոն Վարդանի	130	ԼՀԿ
Ստեփանյան Ռուբիկ Շահումի	129	ԼՀԿ
Ստեփանյան Ստեփան Սամվելի	127	ԼՀԿ

1. [illegible] [illegible] 093
2. [illegible] [illegible] 099
3. [illegible] [illegible] 103
4. [illegible] [illegible] 106.
5. [illegible] [illegible] 095.
6. [illegible] [illegible] 112
7. [illegible] [illegible] 094
8. [illegible] [illegible] 091
9. [illegible] [illegible] 100
10. [illegible] [illegible] 098
11. [illegible] [illegible] 090
12. [illegible] [illegible] 108
13. [illegible] [illegible] 101.
14. [illegible] [illegible] 107.
15. [illegible] [illegible] 114
16. [illegible] [illegible] 111
17. [illegible] [illegible] 109
18. [illegible] [illegible] 110
19. [illegible] [illegible] 113

20. Умурзаков	Дастанович		112.
21. Фелрд	Нурланович		096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

26 փետրվարի, 2021թ.

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի նախագահ
ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոն Միրզոյան,

Ի լրումն երեկ՝ փետրվարի 25-ին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» և «Լուսավոր Հայաստան» խմբակցությունների կողմից ներկայացված «Ռազմական դրությունը վերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշման նախագծին կից ներկայացված փաթեթի՝ կից ուղարկվում է «Լուսավոր Հայաստան» խմբակցության որոշումն Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու մասին:

Տեղեկացնում ենք, որ ստորագրությունները ներկայացվել են նշյալ փաթեթում:

Հարգանքով՝

ԷԴՄՈՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ

ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈԼՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն
0095 Երևան,
Բաղրամյան 19, 134

Republic of Armenia
Yerevan 0095
19 Baghramyan Street, 134

+374 11 513 423 | www.brightarmenia.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ում
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 103-րդ հոդվածի 3-րդ մասը, 120-րդ հոդվածի 3-րդ մասը, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 97-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, 99-րդ հոդվածի 1-ին մասը և 106-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցությունն իր *2021 թվականի փետրվարի 25-ի* նիստում

Ո Ր Ո Շ Ե Ց

հանդես գալ նախաձեռնությամբ և ներկայացնել «Ռազմական դրությունը վերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշման նախագիծը:

ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
0095 Երևան, Բաղրամյան 19 (+374 11) 513 423
www.brightarmenia.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05, bhk@parliament

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 119-րդ հոդվածի 3-րդ մասը եւ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» 1586-Ն թվակիր որոշմամբ հայտարարված ռազմական դրությունը վերացնել:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկսված արցախա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի ողջ երկայնքով թշնամու կողմից սանձազերծված ակտիվ պատերազմական գործողությունների հետեւանքով Հայաստանի Հանրապետության կառավարությունը կայացրել է «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» որոշում՝ միաժամանակ սահմանելով ռազմական դրության ժամանակ կիրառվող միջոցառումները եւ իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումները, ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովող միջոցներն ու մարմինները:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում կրակի եւ բոլոր ռազմական գործողությունների լիակատար դադարեցման մասին հայտարարվել է 2020 թվականի նոյեմբերի 10-ին՝ Մոսկվայի ժամանակով 00:00-ից, այն բանից հետո, երբ Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլհամ Ալիեւի եւ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի կողմից 2020 թվականի նոյեմբերի 09-ին ստորագրվել է հայտարարություն:

Ըստ նշյալ հայտարարության 3-5-րդ կետերի՝

- Շփման գծի երկայնքով Լեռնային Ղարաբաղում եւ Լաչինի միջանցքում հաստատվում են ռուսական խաղաղապահ ուժեր 1960 զինվորականի չափով, հրազենային զենքով, 90 զրահատրանսպորտային եւ 380 ավտոմեքենաներով եւ հատուկ տեխնիկայով:
- Ռուսական խաղաղապահ զորակազմը տեղակայվում է հայկական ուժերի դուրսբերմանը զուգահեռ: Խաղաղապահները մնում են 5 տարի ժամանակով՝ ավտոմատ երկարացման հնարավորությամբ, եթե հաջորդ 5 տարվա համար կողմերը ժամկետի լրանալուց 6 ամիս առաջ չեն հայտարարում այս դրույթի կիրառությունը դադարեցնելու մասին:
- Արդյունավետության եւ վերահսկողության համար կողմերի միջեւ պայմանավորվածությունների կատարման համար հաստատվում է կրակի դադարեցման խաղաղարար կենտրոն:

Հաշվի առնելով նշյալ իրողությունները՝ առաջարկվում է վերացնել սեպտեմբերի 27-ին հայտարարված ռազմական դրությունը: